

ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԵԿ

Տարեկան գինը 10 բուրլ, կէս տարեկանը 6 բուրլ:
Առանձին համարները 5 կօպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք զինում են ուղղակի
Тифлис. Редакция «Мелек»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կօպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ Ջալալ-Օղլուց:
Նամակ Զաքարիայից: Նամակ խմբագրին: Ներքին
լուրեր: — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Եփրատ:
Նամակ Թիֆլիսից: Արտաքին լուրեր: — ԽԱՌՆ
ՀՈՒՐԵՐ: — ՀԵՌԱՅԻՐՆԵՐ: — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
ՆԵՐ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԶԱԼԱԼ-ՕՂԼՈՅ

Օգոստոսի 2-ին

Մի օտարական կամ ճանապարհորդ, որը հե-
ռուից մեծ զարգացում կարող է կազմած լինել
Ջալալ-Օղլուիցների վրա ինչպէս եւ, չէ կարող տը-
խուր տպագրութեան տակ չը մտնել, երբ իր
երևակայածի և սպասածի հակառակ պատկերը կը
ներկայանայ իր առաջ: Իսկպէս ասել Ջալալ-
Օղլին գիւղ է, բայց պէտք է խոստովանել, որ
արտաքին տեսքով պատկերանում է իր այցելու-
ների առջև իբրեւ մի փոքրիկ և գեղեցիկ քաղաք,
իբրեւ մի զարգացած նորահարս... Խրաքանչիւր
տան կզմիտրով ծածկված կտուրները ակամայ
համոզում են օտարականին թէ՛ իւրաքանչիւր ջա-
լալ-Օղլեցի ունի իր զրամագլուխը: Նրանցից ամեն
մէկը ճանաչում է իր պարտականութիւնները, ու-
նեն բարեկարգ դպրոցներ, պայծառ եկեղեցիք,
դաստիարակված քահանաներ. մասաւանդ եթէ
կարճ լինի ժամանակը հարկւրաւոր խաչերի ա-
նուններ կրկնելով երեսիդ խաչ քաշելով՝ երգմամբ
պիտի հաւատացնես, սիրելի ընթերցող, այս գիւ-
ղին կամ գիւղացիներին վատաբանող պարոնե-
րին թէ՛ Ջալալ-Օղլեցիք սրտանց սիրում են մի-
մեկանց, ամենքը մի սիրտ եղած կապված են հա-
սարակութեան շահերի հետ և այլն, սակայն մը-
տիր սրանց չըջանի մէջ, գոհիւր մի քանի օրեր,
հազար լուրեր պարտականութիւն հետ, կը գտնես
անշուշտ ամենքին աղքատ, թէ բարոյապէս և թէ
նիւթապէս, կը գտնես սրանց դպրոցները բարեյո-
նեան խոտանակութիւնից մի բան էլ աւելի... Մը-
տիր այդ եկեղեցիք՝ կը տեսնես անկանոնութիւն
եկեղեցական դասի մէջ, Աստուծոյ տան մէջ եր-
գում են խառնիճադան և զոռելի եղանակներով,
կը փակես անշուշտ լեկվելը չը լեկու բարձ-
րահասակ սարկաւազից անախորժ օրհնես տէ-
րը, կը փակես աչքերդ չը նկատելու սեղանի
առջև վազվզող անկիրթ երեխաներին, ներկայ
եղիր մի անգամ պատարագին և լսիր թէ
դպրապետ պարոնը, ինչ առողջանութեամբ, և
թրչափ սուտ և սխալ խօսքերով լցնում է եկե-
ղեցին, ձանձրացնելով միանգամայն ժողովրդեան
լեկվելը. ել Աստուծոյ տանից և մտիր դրանց փո-
ղոցները, կը տեսնես անշուշտ 10—15 տարեկան
երեխաներ կաւրամի սլօն ուսերի վրա ձգած
խրաքանչիւր ծայրից մի մի վիհ դօ կապած
ջուրն են շտապում, հետաքրքրվի՛ր և կը պատ-
մեն լեզու որ խեղճ երեխաները ջրի են գնում: Այս,
սրանով պարզ դառնալով կարող ես կազմել ջա-
լալ-Օղլեցիների վրա. այս նորահարսի նման զար-
գարված գեղեցիկ գիւղը չունի խմելու ջուր, կայ
թէ պէտ և մի երկու աղբիւր, բայց տա-
րին մի քանի անգամ սպառելով այս վի-
ճակին ենթարկում է ժողովրդեան ամենքին. փա-
փազելի էր խմանալ գիւղի ներկայացուցիչ պա-
րոնները ինչու վրա են մտածում, երբ խմելու
ջրի համար իւրաքանչիւր օր 2—3 անգամ դա-
տապարտված են 300 ոտնաչափ խորութեամբ
ձորը ինչեւ փոքրիկ երեխաները, այն եւ բոլորն,
այն եւ մերի, այն եւ... Լաւ չէր լինի արդեօք
կանանց չուսչօրէն չը զգեստաւորէին, ոսկու և
դերի ալի մինը պակաս անէին, իրենց արծա-
թէ գօտիներէ կշիւր փոքր բռնէին, ուսե-
ւելները չափաւորէին և ինչպէս ասում են ի-
րենց օտը իրենց վերմակի երկայնութեամբ երկա-
րացնէին և գիւղի խմելու ջուրը առատացնելու

համար գործադրէին, դեռահաս մանուկներին 300
ոտնաչափ խորութեան ունեցող ձորը մանգալուց
ազատէին, դպրոցների դռները մանուկների ա-
ռաջն բաց պահելով իրենց զաւլը երջանկութիւն-
ները երևակայէին, իրենց փայլուն ապագան դըպ-
րոցներից սպասելու յուսով ապրէին. ո՞վ չը գիտէ
որ դպրոցներից սպասելիք բարեքները մեծ և ա-
մենակարեւոր պէտքերն են մասաւանդ հայերիս
համար և դրա համար է ահա մի համեստ խնդիր
հրապարակաւ առաջարկում եմ մեծ պ. տեսչին
նորա ուշադրութիւնը հրաւիրելով դպրոցների ան-
բարեկարգ դրութեան վրա, որին յիշուի վտանգ
է սպառնում: Ես որչափ կարողացայ ստուգել
ուսուցիչներից պ. Տ. Կաթիկեանը բաւական խոր-
ձուած, և հասուն դադափառի տէր մի անձնա-
ւորութիւն է, որը վարում է և տեսչութեան պաշ-
տօնը. իսկ պ. Գ. Կուզանեանցը մի հասկացող
մի խոհական և մի աշխատասէր երիտասարդ է
որը իր բոլոր արժանաւոր յատկութիւններով հա-
մակելի եղած է ամենքին. բայց պէտք է խոս-
տովանել որ այս երկու պարոնները, որոնց առա-
ջինը աւարտել է խալիպեան ուսումնարանում,
իսկ վերջինը, ինչպէս, լսեցի գիմնադիւնում, ծա-
ռայում են չնչին ուժիկով, իսկ վարժուհին՝ տի-
կին Սիմէնեանցը նոյնչափ աշխատութեամբ և
չնչին ուժիկով, բոլորովին հանգիստ հողով կըռ-
ւում է շատ արդեւքների հետ իր նպատակ ընտ-
րելով տարածել գիտութիւնը իրական սեռի ման-
կանց մէջ, բայց ցաւովն սա է, որ սրանցից ու-
մանը կամուսնում են թողնել դպրոցները, չնորհիւ
մի քանի պարոնների...

Հոգաբարձուները կատարում են բաւականաչափ
իրենց պարտականութիւնները, բայց այլ ևս պաշ-
տօնավարութեանց ժամանակամիջոցը լրացել է և
նոր հոգաբարձուներ ընտրելու համար սպասում
են թեմական տեսչի գալուն: Ժողովրդեան
մեծամասնութիւնը համակրում է ուսումնարան-
ներին, ապացուցող, ինչպէս ինձ պատմեցին, 12
հազար լուրեր դպրոցների դրամագլուխը կազմում
է ժողովրդի նուիրաբերութիւնը, բայց սրանցից
շատերի ցանկութիւնը եւ այն է լսել դպրոցների
կից և մտից հաշիւները: Վերջապէս այս ժողո-
վորը աշխուժութեան հանդիպած նախ նման,
երկրման և տատանման մէջ է. զգալի կերպով
նկատվում է սրանց մէջ ներքին խռովութիւն,
այս՝ իմ կարծիքով այնպիսի հանկուղի է, այնպի-
սի մի ծանր խնդիր է, այնպիսի մի երազ է, որը
մեծ պ. թեմական տեսչի ներկայութիւնը կարող
է լուծել և միջնել... Այս եւ պէտք է խոստ-
վանի, որ Ջալալ-Օղլեցիները չը գիտեն ժամանա-
կից օգուտի, որը ունեն բաւականաչափ հող թէ-
պէտ և շատ մասը իրենց անհոգութեան պատ-
ճառով դառնել է սեփականութիւն ուրիշների, ու-
րի մէջ կարելի է ոսկի բուսցնել, բայց զօրադ-
դարար սրանք տակաւին չեն հասկացել հողի արժե-
քը, ամենաստոր գործը սրանց մէջ երկրագործու-
թիւնն է. սրանցից շատերը իրենց ապրելու յոյսը
և միջոցը գտնում են երթեկեկող զինուորներից,
սիրում են տրիցատիկի անպատիւ վաճառակա-
նութիւնը: Ինչպէս ինձ հաւատացրին եթէ Ջալա-
լ-Օղլում երիտասարդները գինեկաճառութիւն չու-
նենան կամ չը գիտնան, դժուար է նրանց ա-
մուսնանալ իրանց սիրած օրիորդների հետ: Սը-
րանք սիրում են արշիւնի և գաղի հետ խաղալ
և այդ արհեստին ծառայացնել իրենց երեխա-
ներին, բթացնելով նրանց ընդունակութիւննե-
րը, որ պարզել է Ջալալ-Օղլեցիներին բնութիւ-
նը իր գեղեցիկ եղանակով և սիրուն զիրքով
իմ համեստ խորհուրդը թող ընդունեն իմ բարե-
կամ Ջալալ-Օղլեցիները չը վատաբանելով ինձ իմ
արգարացի նկատողութիւնների համար: Ես կը
փափաքէի կրկին անգամ Ջալալ-Օղլեցիների հետ
տեսչութիւն ունեցածս ժամանակ գտնել մանուկ-
ներին դպրոցներում ապագայի համար առատ
նիւթ պատրաստելիս, իսկ հասակաւոր մարդիկ-
ներին դաշտում երկրագործութեամբ պարապելիս
և այլն: Այս անգամ համառօտ, միւս անգամ ըն-

դարձակօրէն կը պատմեմ սիրելի ընթերցողներին
իմ սիրած երկրի և նրա մէջ ապրող ժողովրդեան
դրութիւնը:

Օտարական

ՆԱՄԱԿ ԶԱԼԱԼ-ՕՂԼՈՅ

Օգոստոսի 4-ին

Ջալալ-Օղլուց ոչ հեռու գտնվում կախ գիւղը:
Սա Ջալալ-Օղլու շրջակայքում առաջին արդիւնա-
ւոր գիւղերից մէկն է, բայց ամենաաղքատ և ան-
կարգ վիճակի մէջ է, չը նայելով թէ ժողովրդի
աշխատանքիւնք և թէ բնութեան առատաբե-
րութիւնը: Երա բուն բնակիչները սիւնի թոք-
քերն են և խնդրով կոչված վրաց մի ցեղը, որ
աշխատութեան կողմից կոչվաւ մէջ առաջիննե-
րից մէկը կարող է համարվել: Պարագում են
վար ու ցանքով, որից ստանում են առատու-
թեամբ ցորեն, դարի, բրինձ և կորեակ, նոյնպէս
չիրանազանութեամբ, որ յայտնի է իր լաւ տե-
նակով և վերջապէս խաչնարածութեամբ, որից
ստանում են առատ բուրդ. բուսցնում են, նոյն-
պէս, կաղին և շագանակ և կտրտում են անտա-
ւից սարաղան կոչված բոյսերի տերեւները,
որոնք հարկաւորվում են կաշուէզրոյթութեան:
Այս բոլորը ստացվում է այնքան առատութեամբ,
որ բաւականացնելով այս կողմերին, վաճառա-
հանվում է դէպի Թիֆլիս և այլ կողմեր:

Մի գիւղ, որ արտադրում է այնքան բազմա-
տեսակ արդիւնք, նրա ժողովրդը գտնվում է
ամենաաղքատ դրութեան մէջ: Ուրեմն ո՞ր է դը-
նում այդ արդիւնքը, կամ ո՞ր վիշապը կլանում է
նրան: Յաւօք սրտի պիտի ասեմ, որ այդ վիշապ-
ները՝ դուր և բն, այն դուրը, որոնք յայտնի
են իբրեւ խնկացի և բարի վաճառակաւներ: Կայ
այստեղ մօտ 100 խանութ, որոնց մի քանիսը
թուղթեր են, իսկ մնացեալը գոկերի, որոնք
հրեայ վաշխառուի նման խլում են մինչև ան-
գամ ժողովրդի բերանի հացը, ձգում են նրան
անկիրթ պարտքի մէջ, և վարվում են նրա հետ
միջնադարեան գերիվաճառների նման: Զը կայ
մէկը, որ պարտական չը լինի գոկին այն եւ ան-
վերջ, գուցէ և նախնիքից. մնացածը պարտքով:
Ժողովրդը տղէտ է, իսկ գոկը խորամանկ և
անգութ. եթէ օրինակ պարտաւորակով պարտ
է մէկը գոկին մի քանի հարիւր բուրլի, տարվայ
գլխին գալիս է հարիւրին 200% և բացի այդ եթէ
տալիս է 10 բ. ձոթի կտոր, հաշվում է 15—20
բ. իսկ եթէ գիւղացին բերում է 10 բ. ցորեն,
գոկը հաշվում է 5—6 բ.: Այսպիսով տարեկան
արդիւնքից կարողանում են տալ միայն տոկոսը,
իսկ պարտաւորակը մնում է որդոյ որդի: Վեր-
ջը երբ անբաւականութիւն է պատահում, գտն-
վում են կառավարչին պարտաւորակով,
և տներում եղած կայքը ցրվելով և ծախելով
ստանում են իրանց փողերը, իսկ խեղճերը այ-
նուհետեւ աշխատելու միջոց չունենալով տանջ-
վում են աղքատութեան մէջ:

Ահա թէ ինչ անգութ միջոցներով են առհա-
սարակ գոկերը աշխատել իրանց հարստութիւնը,
որ վայել չէ մինչև անգամ հրեայ վաշխառուին,
բայց այնու ամենայնիւ բարի վաճառակաւի սուրբ
զիմակը երեւաններին ծածկած շրջում են առանց
ամաչելու: Թող այժմ հանվի այդ դիմակը, և հա-
յերը թող հասկանան, որ իրանց մէջ կան այդ-
պիսի մարդիկ, որոնք արատաւորում են ընդ-
հանուր հայութեան անունը օտարների առաջ:

Ք. Թ.

ՆԱՄԱԿ ԽՄԻՂԱՐԻՆ

Թիֆլիս, 20 օգոստոսի

Ուրբաթ, օգոստոսի 20-ին ժողովի հանդիսա-
ւոր բացումից և ճառախօսութիւններից յետոյ
այսուհետեւ սկսվելու են ժողովի կանօնաւոր
պարապմունքները: Ժողովի արդիւնաւոր
գործունէութեան համար կարեւոր ենք համարում

այստեղ դարձնել ամենի ուշադրութիւնը մի կա-
րեւոր հանգամանքի վրա: Ինչպէս յայտնի է ժո-
ղովին իրաւունք ունեն ներկայ գտնվելու և այն-
պիսիք, որոնք անդամակցական տոմսակ ունեն և
երկու բուրլի են վճարել: Զը գիտեք թէ կարգ-
յանձնաժողովը ինչ իրաւունքներ է որոշել ոչ-
ուսուցիչ անդամների համար: Եթէ նոքա եւս
պէտք է այս և այն մանկավարժական խնդրի վը-
րա ձայն տան և քուէ դնեն, այն ժամանակ ե-
րակայում ենք՝ թէ ինչ թաթարոգոչ պէտք է
լինի: Յանկարծ մի բուն մանկավարժական խնդ-
րի լուծելում մի դուքնի աշակերտ, կամ մի վա-
ճառական պէտք է այս և ոչ ասի իրան կատա-
րելապէս անձանթ առարկայի վրա, մեծ մասամբ
մտիկ անելով և հետեւելով սորան և նորան: Ա-
ռանց այն էլ մեր մէջ ընտրութիւնները և հար-
ցերի լուծումը կատարվում է ոչ թէ լոգիկաբար,
առողջ մտքով և ամենայն լրջութեամբ և չըջա-
տեսութեամբ, այլ կողմնապաշտութեամբ, կըքե-
րի այս և այն կողմը քաշելով, որի հե-
տեանք լինում է որ ասարժանը արժանա-
ւորի տեղն է խլում և գործը ապաւը-
դիւն կերպով է վերջանում: Եթէ վեր-
ջինը չարիքն եւս աւելանայ, այն ժամանակ ի
հարկէ, ժողովը ոչինչ արդիւնք չի ունենայ: Զէ
կարելի ուշադրութիւն չը դարձնել «Մշակի» մէջ
յայտնած պետիմիտական կարծիքների վրա
մեր ընկերական համագործութեան մասին. իսկ
կարճատեւ օպտիմիստները թող օրօրին հա-
սարակութիւնը խաբուսիկ յոյսերով և հաւատաց-
նեն, որ աւելի չէր կարելի սպասել մի ժողովից:
Նախկին թեմ. վերադասուց պատժ. Տէր-Ստեփան-
նոս Տէր-Ստեփաննոսեանցի սկզբնաւորութեամբ
կայացած 1874 թ. ուսուցչական առաջին ժո-
ղովը չունենալով այն մեծ միջոցները և գործին
նպաստող հանգամանքները, բայց մի և նոյն ժա-
մանակ խելացի և լուրջ կերպով նախապատրաս-
տված լինելով, կարճ ժամանակում տուէց
այն օգուտն երբ, որը այսօր ամենքը ու-
սախտութեամբ յիշում են: Իսկ ներկայ ժողովը, որ
երկրորդ է նորանից յետոյ, բայց առաջինն
է իր մեծութեամբ և միջոցներով, հասկանալի է,
որ անհամեմատ աւելի մեծ և շօշափելի արդիւնք-
ներ պէտք է ցոյց տայ և ցաւալի կը լինի եթէ
այնքան արդիւնք չի ցոյց տայ, որքան 1874 թ-ի
ժողովը:

Յանկանալով ուսուցչական ժողովին արդիւնա-
ւոր գործունէութիւն, մենք այստեղ փոխանակ
օպտիմիստական խաբուսիկ խօսքերի և պերճա-
խօսութեան, հրաւիրում ենք ուսուցչական ժողո-
վի լուրջ, խոհմ, չը խաբուղ, գործի վրա դրա-
կան աչքով նայող անձինքներին ուշադրութիւնը
«Մշակի» մէջ ուսուցչական ժողովի առիթով
զրկած դիտողութիւնների և առաջարկութիւննե-
րի վրա: Յանկանում ենք, որ ժողովում լոյսը
յաղթող հանդիսանայ խաւարից, ճշմարիտը սու-
տից, արժանաւորը անարժանից...

Կ. Մ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ուրբաթ օր, օգոստոսի 20-ին, ժամը 12-ին,
Թիֆլիսի վանքի մայր-եկեղեցու մէջ պատարագ
կատարելուց յետոյ, հանդիսաւոր կերպով բաց-
վեց Առաջնորդարանի դահլիճում Հայոց Ընդհա-
նուր Ուսուցչական ժողովը: Բացումը սկսվեց
հոգեորականութեան կատարված մաղթանքներից,
յետոյ հայր Մարթէ վարդապետը քանի մի խօս-
քով բարեկց Ուսուցչական ժողովի բացումը: Հայր
սուրբն ասեց որ ուսուցիչներն են մեր յուսու
և առաջադիմութեան խաղիսները, որ մեր բարոյա-
կան փրկութիւնը ստանալու ենք ուսումնարան-
ներից: Առաջին հայոց ընդհանուր ուսուցչական
ժողովը բարեկեղ չէ կարելի ուրախութեան ար-
տասունքներ չը թափել, աւելացրեց հայր սուրբը:
Թող թրահաւատներն ու կապաճոռները, ասեց
նա, չը հաւատան որ այդ ժողովը կունենայ մեծ

արդիւններ, իսկ ինքն հայր սուրբը հաւատացած է որ ներկայ ժողովը մեծ արդիւնք կունենայ: Դրանից յետոյ քանանաներից մին, այն է տէր Ստեփան Տէր-Ստեփանեանց կարդաց Վեհափառ կաթողիկոսի կոնդակը, որով նշանակվեցան և հաստատվեցան կարգադրիչ յանձնաժողովի անդամները: Նոյն կոնդակով պ. Գ. Բարխուդարեան նշանակված է ընդհանուր ժողովի նախագահ: Կոնդակը օրհնում է լինելի ժողովի գործունէութիւնը և իրաւունք է տալիս ժողովին մշակել մի միաձեռն քաղաքի հայոց թէ ծխական և թէ միջնակարգ դպրոցների համար: Վեհափառի կոնդակը կարդացվելուց յետոյ, ուսուցիչներին, մեծ մասամբ գաւառներէն եկած ուսուցիչներին խումբը, երգեց ուսուցաց աղջկան իրը (Տէր կեցողի զվարճիչ) հայերէն լեզուով: Վերջապէս ժողովը բացեց պ. Բարխուդարեանց: Նա յայտնեց որ ուսուցիչները հրաւիրված են ամեն տեղերէն, ուսումնարանի գործը բարոյեցնել համար: Ուսումնարանից է կախված, ասեց նա, ամեն աղքի ներկայ և ապագայ բարօրութիւնը: Այս մեծ նպատակին հասնելու համար մեզ նպաստում է բարեխնամ տէրութեան հովանաւորութիւնը և վեհ. կաթողիկոսի խնամքը, քանի որ Վեհափառը ոչ թէ միայն հաւանութիւն տուեց ժողովի կայանալուն, բայց և կարգադրութիւն արաւ ներթափանց օժանդակել այդ գործին: Բարխուդարեանց յիշեց և այն համակրութեան մասին, որ վայելում է այդ ժողովը հայ հասարակութեան կողմէն: Այս ինչպէս բացատրեց պ. նախագահը ժողովի նշանակութիւնը: Մեր դպրոցները իրանց դասընթացքով, դասատուութեան եղանակով և դասադրքերով բոլորովն տարբեր են միմեանցից: Մենք չունենք ուսման միաձեռն քաղաքներ թէ մեր տարրական և թէ միջնակարգ դպրոցների համար: Ժողովի նպատակն է, ուրեմն. 1) կազմել ծրագիր, 2) միջոց տալ ուսուցիչներին լսել օրինակելի դասեր և 3) քննութեան ենթարկել ուսումնարանական մի քանի հարցեր: Ուսուցիչները պէտք է յայտնեն ժողովին իրանց նիւստի վերջում կարդացվեցաւ այն հեռագիրը, որ ժողովի կողմից պիտի ուղարկվի Վեհ. կաթողիկոսին Ուսուցչական ժողովի բացման առիթով:

Պէտք է խոստովանվենք որ Ուսուցչական ժողովի առաջին բացման հանդիսաւոր նիստը այն կարգ ու կանոնը, այն շքեղութիւնը չունէր, ինչ որ մենք իրաւունք ունէինք սպասել նրանից: Դաշինքը փոքր լինելով, հանդիսականներից չատեղը նստելու տեղ չը գտան և կանգնած մնացին. այդ տեսակ հանդիսաւոր օրվայ առիթով դաշինքին հարկան սենյակների բոլոր դռները, մեր կարծիքով պէտք է բացվէին հասարակութեան համար. ով որ տեղ չը գտաւ դաշինքում, կարող էր այսպիսով հարկան սենյակներից հանդիսատես լինել ժողովին: Բացի սորանից ոչ մի դարձարանք, ոչ մի պսակ, ոչ մի կանաչ բոյս չէր երևում դաշինքում, ինչպէս սովորութիւն կայ, առհասարակ, այդ տեսակ զէպքերում, զարդարելի դաշինքները: Նստելի կարգերում նստածները չէին կարող ոչ տեսնել, թէ ինչ էր կատարվում, ոչ էլ լսել թէ ինչ էր խօսվում նախագահական սեղանի մօտ: Օրիորդներից մի քանիս տեղ չը գտնելով, կանգնած մնացին, կամ ստիպվեցան նստել լուսամուտների վրա: Խմայնաք միայն թէ երգողները ուսուցիչներն են, բայց չարժանացանք տեսնել այդ դպրոցական համեստ գործողներին: Այդ տեսակ դիպուածում մի բարձր տեղ, էստորագաւ են չինում, որի վրա կանգնելով, երգելի խումբը կարող էր ամենից աչքի առաջ լինել: Երգողները ամենքից ետեւ էին կանգնած և չէին երևում ամենին: Առհասարակ երևում էր թէ կարգադրողներին պակաս էր կարգադրողական ոգին և ընդունակութիւնը: Միմուտի սեղանի մօտ նկատելի էին միայն երկու հայ պարբերական հրատարակութիւնների ներկայացուցիչներ, իսկ մնացած երկուսն և օտար ամուսնի ներկայացուցիչները բացակայ էին:

«Արձագանք» շաբաթաթերթը, իր ժողոված տեղեկութիւնները համեմատ, լսել է, որ երէկ, օգոստոսի 21-ին, Ուսուցչական ժողովը պէտք է ունենար իր պարագմունքների առաջին նիստը Ս. Գայիանեան օրիորդաց դպրոցի դաշինքում: Նախ ժողովը այդտեղ կընտրի վեց սեկցիա, կամ բաժիններ, հետեւալ առարկաներից 1) լրօն, 2) հայոց լեզու, 3) ուսուցաց լեզու, 4) մաթեմատիկա և բնական գիտութիւններ, 5) պատմութիւն և աշխարհագրութիւն, 6) զեղարուեստներ (երգեցողութիւն, գծագրութիւն): Ներկայ գտնվող ամեն մի անդամ կարող է զրկել միանուագ մի, երկու, երեք և կամ բոլոր, վեց բաժիններում: Այդպէս, այս կամ այն բաժնում զրկողները, որոնք պիտի մասնակցեն պարագմունքներին, իրանց ամբողջութիւնը կազմակերպելուց յետոյ, հեռանում են առանձին սենյակ և քուէարկութեամբ ընտրում են իրանց խմբի համար մի ատենագիտ և մի ատենագիր: Ընտրութիւնն աւարտելուց յետոյ, խումբը յայտնում է իր որոշումը ժողովին: Սրանից յետոյ ժողովը որոշում է թէ ով իր միջից և ինչ առարկայից պիտի կարդայ օրինակելի դասեր, որ օրը և ինչ ժամերին: Այնուհետև նոյն օրը, երեկոյեան ժամը 6-ին, նոյն դաշինքում, դարձեալ կը լինի ընդհանուր նիստ, հանդիսականների ներկայութեամբ, որ կը կարդացվի և կը քննվի պատրաստած ծրագիրների նախագիծը: Քուէարկութեան և ընտրութեան ձայն ունենալու իրաւունքը պատկանում է միայն հայ-հոգևոր իշխանութեան վերահստութեան և հովանաւորութեան տակ եղած ամեն կարգ դպրոցների ուսուցիչներին, վարժուհիներին և հոգաբարձութիւններին կամ ուսումնական վարչութիւններին կողմից պաշտօնապէս չնորժեցած պատգամաւորներին: Բայց վիճել, դատել հրապարակապէս ամեն հարցի մասին իրաւունք ունեն բոլոր հանդիսականները, որոնք ձեռք են բերել մուտքի տոմսակը: Ամենայն անգամ թոյլ է տրվում խօսել միանուագ ոչ աւելի քան մի քառորդ ժամ: Սակայն հանդիսական պարոններ իրաւունք չունեն ընդհանուր իրանց նիւստումը քննարկելու ոչ օրինակելի դասերը և ոչ որ և ինչ զեղարուեստ կամ ձուէ: Առհասարակ խօսելու իրաւունքը ամենքը ձեռք են բերում ատենագիտի թոյլտուութեամբ և միանգամայն ենթարկվում են սրա կարգադրութիւններին: Հանդիսականներ վայելում են վարժապետների հետ համահաւասար իրաւունք, բայց ընտրութեան ձայնի իրաւունքից: Պարբերական մամուլի ներկայացուցիչները մուտք ունեն ամեն նիստերին և նրանց համար առանձին որոշած տեղ է պատրաստած:

Սարսափելի չորք և խեղդող եղանակը շարունակվում է թիֆլիսում: Վաղուց է արդէն որ անձրև եկած չէ մեղանում:

Օրդոսայի լրագիրներում կարդում ենք որ նոյն օրը ամս մի վրացի իշխան, Երեսով աղզանուհի, սկսեց այլ և այլ խաբարներով անել Օրդոսայում, մարդկանցից մեծ գումարներ յափշտակելով, խաբելով ամենքին թէ ինքը շատ հարուստ է, կալուածներ ունի Կովկասում և այլն: Օրդոսայի վարչութիւնը տեղեկութիւններ հաւաքեց և յայտնեցաւ որ դա նոյն Երեսովն է, որ արդէն մի անգամ խաբարելութեան համար բանտարկվեցաւ Բերկինում:

Մեզ խնդրում են տպել հետեւեալը: «Արեւմտ Գարտաշեանց յայտնում է ի գիտութիւն ամենքի որ կարգադրութեամբ Վրաստանի և Խաբարի խաբար կօնստիտուիայի, կիրաւի օրը, ամսին 22-ին, ըստ ծխի հայաստանեայց սուրբ եկեղեցու, կօծվի Ծաղկի գիւղի նորակառոյց եկեղեցին: Վասնորոյ հրաւիրվում են մեր համադրայիները հանդիսին ներկայ գտնվելու համար:»

Շնորհակալութեամբ ստացանք «Մարկոսը կամ մանկանց պարտեզը և նրա նշանակութիւնը» հրատարակական դասախօսութիւն Ա. Բաշթիբեանի, որ կարդացվեցաւ մայիսի 4-ին 1882 թ-ին, Արժուտու թատրոնում, յօդու հայոց առաջին ընդհանուր ուսուցչական ժողովին: Բրօշիւրը հրատարակված է պ. գնդապետ Ալեքսանդր Մելիք-Հայկաբեանի ծախսով և տպված է Զով. Մարտիրոսեանի տպարանում: Պէտք է հայտնել, բայց կարգադրիչ յանձնաժողովը ձգտեցաւ է բաժանում այդ բրօշիւրը ուսուցչական ժողովի անդամներին:

Իրիւթիւն մեզ գրում են: «Մեր ուսումնարան»

Ների այս տարվայ հարցաքննութիւնները անաշուղտ անցան և համեմատելով անցեալ տարվայ հետ աշակերտները այնքան առաջադիմութիւն չեն աւելցրել ուսման մէջ: Ամեն բանում ուսուցիչներին չենք կարող մեղադրել, բայց մեր հասարակութիւնը և դպրոցի հոգաբարձուները իրանք անտարբեր գտնվեցան այս ամբողջ տարի դէպի մեր խեղճ դպրոցները: Այս անտարբերութեան պատճառը հասարակութեան մէջ եղած անվերջանալի վէճերն էին և հոգաբարձուների հայել չը տալը: Խեղճ ուսուցիչներն էլ, զգուշելով թէ հասարակութիւնից և թէ հոգաբարձուներից, բոլորովն թող կերպով էին վարում իրանց այս տարվայ պաշտօնը: Ուսումնարաններ Իզդիրում ներթափանց շատ անապահով դրութեան մէջ են և շատ կարելի է որ երկու տարին կատարելապէս կը փակվեն:»

Մեզ գրում են հետեւեալը: «Իզդիրում գիւղը բաղկացած է երկու տարբից,—հայ և պարսիկ աղզաբնակութիւնից: Երկուր ժամանակից ի վեր այդ երկու աղզութիւնները անդադար անբաժանութիւններ ունէին իրար մէջ ջրի պատճառով: Ամբողջ գիւղը համար մի առուակ կար միայն և դա առիթ էր տալիս հայերին և թուրքերին միմեանց մէջ անվերջանալի վէճեր ունենալ: Այժմ, չնորսով տեղիս գաւառագետ պ. Կոկչանովի, հայերը աղատվեցան ջրի նեղութիւնից, ուրեմն և պարսիկների հետ վէճեր ունենալուց, բանալով իրանց համար առանձին առուակ: Սորա համար Իզդիրումայի հայ հասարակութիւնը իր խորին շնորհակալութիւնն է յայտնում պ. Կոկչանովին:»

«ԿԱՅԻՅԱՅ» լրագիրը հաղորդում է որ թիֆլիսեցի մի հայ օրիորդ, Հեղինէ Ղարաբեկ, որ արտասահմանում երգեցողութիւն է սովորել և, ինչպէս վկայում են երեկի երաժիշտները, նշանաւոր ձայն ունի, ժամանակաւորապէս եկաւ թիֆլիս և դիտաւորութիւն ունի իր եղբոր հետ, որ յայտնի պիտիստ է, այս օրերում մի կօնցիտ տալ մեր քաղաքում:

Մեզ խնդրում են տպել հետեւեալը: Թիֆլիսի հայ-թատրոնական մշտական խումբը ի նշան իր խորին համակրութեան դէպի հայ ուսուցչական ժողովը, ինչպէս թիֆլիս, օգոստոսի 27-ին, կը տայ Արժուտու թատրոնում մի ներկայացում հետեւեալ պիէսներից, «Ժողով», կամ Փարիզի չըմբռնիկ» երկու արարուածով, թարգ. Փրանսերէնից և «Բռնի ամուսնութիւն» գործ Մովսէսի, թարգ. Չմեղեանի: Տոմսակները թէ վաղորդ և թէ ներկայացման օրը ծախվում են Արժուտու թատրոնի կասսայում:

«Մշակի» մէջ միանգամ հաղորդել էինք Հաւարարի Խօջիվանքի հայոց գերեզմանատան քաւորաւոր դրութեան մասին, յիշելով մի և նոյն ժամանակ, որ Ներսէս կաթողիկոսի օրով հայոց այդ գերեզմանատունը բարեկարգ վիճակի մէջ էր և ունէր իր մէջ գեղեցիկ այգի ու ձմարվայներ: Այժմ, վերջապէս, անցեալ տարվայ ընտրված երեք հոգաբարձուները, մեծ եռանդով հաւաքած լինելով մինչև 13 հազար բոլոր գումար, սկսել են այդ գերեզմանոցի պարսպի շինութեան գործը: Հիմքը դրված է արդէն և պատերը մինչև երկու արշէն բարձրացել են: Վերջինչալ երեք գործունեայ հոգաբարձուներն են. Մելիքեան, Սալամբեկեան և Շալիարեան: Այդ վերջինը, մասնաւոր շատ եռանդով է կպել գործին, անդադար անը ծաւալեալ երթնելով և վերահստելով ամեն աշխատանքներին: Յանկայի կը լինի որ մեր բոլոր գերեզմանոցներում ծառեր անկվէին: Կա զփոքր գործ չէ և մեծ ծախս չէ պահանջում. կայ ծառի մի տեսակ, այն է ալկաջիան, որ բուսնում է ամենաշուր, անշուր, ամայի տեղերումն էլ:

Լսում ենք որ յայտնի ձեռնածու պ. Բէկեր, դիտաւորութիւն ունի զալ Թիֆլիս սեպտեմբեր կամ հոկտեմբեր ամսին, մեր քաղաքում մի քանի ներկայացումներ տալու համար:

Ռուսաց «Вѣстникъ Европы» ամսագրի վերջին, յուլիսի տետրակը շատ գեղեցիկ կերպով կազմված է և պարունակում է իր մէջ մի շարք շատ հետաքրքիր յօդուածներ: Այդ յօդուածների թւում ամենահետաքրքիրները սրանք են. «Բուրժուազի վերելքի կենսագրութիւնը», Էմիլ Զօլայի օրմանների քննադատութիւնը «Современный ро-

манъ» վերնագրով և մի ուսուց ինքնուրոյն վէպ նոր ժամանակներից «Даровой урокъ» (Անվարձ դաս) վերնագրով:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԻՊՈՍՏ

«Figaro» լրագրի Ալեքսանդրիայի թղթ-թակիրը հեռագրում է օգոստոսի 14-ից: Այստեղ արշաւող զօրքերը զօրախաղ ունեցան: Շատանդական զփարդիան իր վրա առանձին ուշադրութիւն էր դարձնում: Զօրախաղը կառավարում էր զլխաւոր շտաբի կառավարիչ գեներալ Էդի: Զօրախաղից յետոյ Կոնստանտինոպոլի բաւալիօններ իր ուղեկցութեամբ հանդիսաւոր գնացքով անցաւ քաղաքի փողոցներով: Զինուորական այդ զբօսանքը քաղաքի աւերակների մէջ վատ տպաւորութիւն գործեց եւրօպական աղզաբնակութեան վրա: Կոնստանտինոպոլի զօրքերը կանգնած են Բամբէկ ամրութիւնների առաջ: Նրանց դիրքերը սկսվում են ծովի ափին Զիլիկիա բերդի մօտ և հասնում են մինչև Բօլետտայի երկաթուղին: Գրիմի զօրքերը պահպանում են երկաթուղու և Մահմուդէի ջրանցքի մէջ եղած տարածութիւնը: Կապիտան Ուելսոն և Զեբըմայդ վինուորական գործակալներ են նշանակված անգլիական զինաւոր հիւպատոս Մելետի մօտ: Երէկ Մելետից վեց կիլոմետր հեռաւորութեամբ մի փոքր կռիւ կատարվեցաւ: Մայր Զիլիկիա 300 նաւաստիներով յետ միջոց 500 արաբների յարձակումը, որոնցից 200 հեծելազօր էին: Մահմուդ-փաշա-Սամի 6,000 եղկապաշտներով և 60 Թիւրքօթմանով դրաւել է Նեֆիշ և սպառնում է ծովային ջրանցքին: Երկու կրելով Սուէզի վրա յարձակում գործելու կարելութիւնից, ծովապետ Սլեյտ, չը նախելով Լեպտեպի բողոքներին, գրաւեց այդ քաղաքի առաջ գտնվող սորատեղեական միջանկի կետեր: Ներկայտակա փոստային նաւը, գալով Գիւլիայից, մտաւ Սուէզի նաւահանգիստը, չիմանալով, թէ նա արդէն գրաւած է անգլիացիներից: Նաւի օֆիցիւրները, տեսնելով, որ գերի են ընկել, յայտնեցին, թէ իրանք խեղդվի կողմն են անցնում: Անգլիական ծովապետների և Լեպտեպի մէջ ծագած անբաւականութիւններին վերջ գնելու համար խեղդվի մի հրաման հրատարակեց, որով նա պատուիրում է քաղաքային պաշտօնականներին չընդգիմադրել անգլիական զինուորական իշխանութեան կարգադրութիւններին:

Ալեքսանդրիայի «Polit. Corresp.» լրագրին հաղորդում են: Ալեքսանդրիան այժմ կատարաւապէս նման է մի անգլիական քաղաքի: Ամեն տեղ կարելի է հանդիպել անգլիական նաւաստիներին, անգլիական զօրքերին և պոլիցիականներին: Արտաքին կարգի հանգամանքները նոյնպիսի միջոցներով գործադրութիւն են պահանջում, իսկ անգլիացիները եռանդոտ միջոցներից չեն վախենում: Անգլիական պահապան զօրքերը գիշերով չընում են քաղաքի փողոցներում, իսկ անգլիական աստիճանաւորները անդադար կանօններ են հրատարակում տեղացիներին և եւրօպացիների համար, չը հօդալով իրաւաբանական մանր հարցերի մասին: Կրա համար անկարելի է յանդիմանել անգլիական կառավարութեանը, որ անկարող է ուրիշ կերպ վարվել և վերջապէս նրա կարգադրութիւնները օգուտ են բերում քաղաքին, որ հետզհետեւ վերականգնվում է: Հանգած փարոսները յուլիսի 20-ից նորից լուսաւորված են և այդ ժամանակից անդադար դալիս գնում են անգլ-

լիական և օտար նաւեր, որոնք վերադարձնում են փախտականներին և զանազան ապրանքներ են բերում: Վերջիշեալ անբնական պայմանների և պատերազմական գործողութիւնների շուտ սկսվելու պատճառով պետութիւնների ներկայացուցիչները գրեթէ ամենքն էլ հեռացան Ալէքսանդրիայից, որպէս զի նոր դժուարութիւններ չը յարուցանեն:

ՆԱՄԱԿ ԹԻՒՆԻՍԱՅԻՑ

Կ. Պոլսի, 9 յուլիսի

Որո՞ւ մտքն կանցնէր թէ եղիպտական հարցը մեծ փորձանք պիտի բանար մեր խեղճ պանդուխտներու գլխին: Եւ սակայն այսպէս եղաւ: Եթէլ ոստիկանութիւնը կը ձերբակալէ վեց հայ համալու-պաշիւնի և կը նետէ ի բանտ: Յուզմունք ելալով պալատը: Նախարարաց ժողովը կը դուստրի: Պոլսի քաղաքապետը, ոստիկանութեան նախարարը կը հրահրուին պաշտօնէից ժողովին, տալ ալեք եղած բացատրութիւնը համաձայն ինքրոյն համար: Եւ այդ յուզման պատճառը, հայ պանդուխտներ կամաւոր զինուոր կը գրուին Անգլիոյ բանակին ընդդէմ իսլամաց: Այս առաւօտ ոստիկանութիւնը խիստ ազդարարութիւններ կը հրատարակէ, առանց հայ անուն յիշելու: Ո՞վ որ կամաւոր զինուոր գրուի խիստ պատժոյ ենթակայ է: Յայտնի իրողութիւն է թէ կառավարութիւնը յուզուելու չափ և չափ իրաւունք ունէր: Երեսկայեցեք անգամ մը, հայ պանդուխտը իր այն տոկոսն և կորովի կազմովը երթալ վարձի դէնք գործածելու: Անգամ մը որ հայը սուլիի Անգլիոյ հետ իսլամին դէմ կուտել, ինչ մեծ փոփոխութիւն հայու ապագային: Խաչակիրներու փրկիչ հայու դաւակը մասնակցի այն կուտին որ կը մղուի բրիտանական և իսլամական մէջ: Ասլ որպէս ալ բարձր ըլլան մեր իրգները պէտք է խոնարհիք տխուր իրականութեան առաջ: Անգլիացիք զմեզ կուտեն ոչ զինակիր, այլ բնունակիր: Մեր առած տեղեկութիւնն է: Անգլիական ընկերութիւնը ուզած են երեք հազար հայեր որ աշխատեն երկաթուղիի և ուրիշ ծառայութեանց, սակայն պէտք է միայն հայ ըլլան, զուտ հայ pour sans: Գանի մը քիւրդեր իրենք ալ կուտեն գրուիլ բայց կը մերժուին: Այս մերժման վրայ քիւրդեր կերթան կրօն ոստիկանութեան թէ հայք կամաւոր կը գրուին Անգլիոյ: Ասկէ առաջ կուգայ այդ աղմուկը: Բայց պէտք է ըսել որ «Աթմայուլ» այսօր իր ակնարկութիւններովը հասկցնել գուցէ թէ զինուորագրութիւնը բոլորովին անհիմն է: Ո՛ր էր թէ «Աթմայուլ» կասկածներն իրականութիւն ըլլալին: Արդեօք եղիպտական հարցը յուսոյ նշույ մը պիտի տայ մեզ, երբ լաւ կը տեսնուի թէ այնքան ցաւեր կը պատարաստէ հայոց: Թէ եղիպտոս գրաւուի Անգլիայէն արդեօք չը պիտի պարտաւորենք շատ յոյսերու, շատ փափաքներու հրաժեշտ տալ երկար առանի համար: Միայն Աստուած չէ որ անփոփոխելի է, այլ և մեր ճակատագիրն ալ:

Ուրիշ փորձանք մ'ալ Հայաստանի գլխուն: Ելին Ուսկուլուս փախած է Պոլսէն, չէր զիտցուիլ ուր փախչին. այսօր լուր կը պտտի թէ Ելիսը վեց հարիւր հեծելազօրի գլուխ անցած մտած է Հեքքիարի: Ինչպէր կը պատրաստուին հայոց համար:

Հայկակ

ԱՐՏԱԳԻՆ ԼՈՒԻՐԵՐ

—Ինչպէս յայտնի է Անգլիան պաշտօնապէս յայտնել է արդէն որ պատերազմական գործողութիւնները եղիպտոսում սկսվել են: Այդ երկիրը արշաւելու բոլոր պատրաստութիւնները արդէն տեսել է Մեծ-Բրիտանիա: Անգլիական և հնդկական զորքերի վերջին կոնսուլդները արդէն ուղարկվեցաւ և հասաւ Եղիպտոս: Բայց բրիտանական կառավարութիւնը մտադիր է զինուորել զօրքի երրորդ զինվորին էլ: Անգլիացիներից ստացված տեղեկութիւններին համեմատ Արաբի-փաշայի պատերազմական ուժերը հետեւեալներն են. Ալէքսանդրիայի առաջ կանգնած են 16,000 զօրք, Ալուէիլում 5,000 մարդ, Իպսոսիլայի և Կայի-բէի մէջ մինչև 8,000 զօրք:

—Անգլիացիները արդէն գրաւեցին Նէֆիշ և եղիպտացիները փախան առանց ընդդիմադրութեան:

—Ինչպէս յայտնի է իտալական յեղափոխական կուսակցութիւնը մինչև այժմ երազում է վերադարձնել Իտալիային աւստրիական Տրիեստ քաղաքը և Աւստրիայի տիրապետութեան տակ մնացած Տիրոլի այդպէս անուանված իտալական մասը: Նոյն իսկ Տրիեստ քաղաքում կայ մի բաւական զօրեղ իտալական կուսակցութիւն, որ ունի մամուլի մէջ էլ իր օրգանները: Նորերում Տրիեստի մէջ բացված աւստրիական արուեստագիտական հանդէսի ժամանակ իտալական կուսակցութիւնը, հանդէսը խանգարելու համար, արձակել տուցեց ամբոխի մէջ մի քանի ձայնիչ ռումբեր: Ամբոխից մի քանի մարդիկ սպանվեցան, մի քանիսն էլ վիրաւորվեցան: Ռումբեր արձակողները կարանաւորված են: Հակաիտալական կուսակցութիւնը Տրիեստում կատաղեց, ամբողջ ցույցեր արաւ իտալացիների դէմ և յարձակվելով իտալական կուսակցութեանը պատկանող մի լրագրի խմբագրատան վրա, ուղղում էր ջարդել խմբագրատունը:

—Կ. Պոլսից հեռագրում են որ ռուսաց դեսպան Նէվիլով յանձնեց սուլթանին իր հաւատարմական թղթերը:

—Լրագիրներում կարդում ենք որ Եւպոնիայի բնակիչների թիւը 1881 թ.ին հասնում էր 36,358,994 հոգուն, որոնցից 18 միլիոնից աւելի արական սեռի են պատկանում, իսկ 17 միլիոնից քիչ աւելի իգական սեռին:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Կրկին աշխարհի կործանման մասին: Ամերիկայի ականաւոր աստղաբաշխ Պրոսթօր սաստիկ վախեցրեց Միացեալ-Նահանգների բնակիչներին մեծ մասին: Նա մամուլի միջոցով յայտնեց, թէ շատ հաւանական է, որ 1897 թ.ին պէտք է աշխարհի կործանումը պատահի, որի պատճառը կը լինի 1843 թ.ին կոմետան, որ կըրկին անցեալ տարի երեւցաւ, և, դատելով նրա աստիճանաբար պակասող ճանապարհից, պէտք է երեւայ ոչ թէ 21 տարուց յետոյ, այլ 21½ տարով նրանից պակաս: Այդպիսով, նա կը հանդէպի արեգակին 1897 թ.ին: Այդ ժամանակ տաքութիւնը այն աստիճան կը սաստկանայ, որ բոլոր մարդիկ, առանց բացառութեան, կը ոչնչանան այդ աղետից յետոյ:

Լինչի օրէնքով վարվելը երեսայի հետ: «New York Herald» լրագիրը հաղորդում է Միլիտանտի նահանգի Պերդենա քաղաքում կատարված սարսափելի անցքի մասին: Տեղական բանտում մի քանի ժամանակից արդէն գտնվում էր Տրիեստ անունով մի 15 տարեկան տղայ, որ երկու մարդ է սպանել: Տեղական բնակիչների կարծիքով, այդ տղայի բնատրութիւնը այնքան փչացած է, որ ոչինչ յոյս չը կայ, թէ նա կուղղվի: Պէրդենան բնակիչները վճռեցին փոքրիկ յանցարարին ենթարկել Լինչի օրէնքին: Արեւելքը բռնութեամբ բանտը մտաւ, դուրս բերեց այն տղայից յանցարարին և կան անուց նրան հեռադրական արժէքի վրա: Արդարադատութեան այդ օտարորդ գործողութեան վկաններ մեծ բազմութեամբ քաղաքացիներ էին. նրանք բոլորը, ճանաչելով և առիւթ փոքրիկ յանցարարին, այն կարծիքի էին, որ այդ օրինաւանդութիւնը շատ արդարացի է, որովհետեւ, միւս կողմից, չէր կարելի սպասել, որ այդ երիտասարդ մարդուն, ալքի առաջ ունենալով նրա փոքրութիւնը, դատարանը մահուան պատժի դատապարտէր:

63 տարի մի խցում: Նորերում Աթենքն լեռան վրա գտնվող մի վանքում, վախճանվեցաւ Աֆանասի անունով մի արեղայ 84 տարեկան հասակում: Նա 68 տարի անցրեց համարեա առանց դուրս գալու իր խցից: 1812 թ.ին, երբ 14 տարեկան էր, նա հողերական կուղիւնը ընդունեց, բայց վանքում կեանքը բւաւական խոտակեաց չը համարելով, նա վառահօր թոյլութեամբ, տեղափոխվեցաւ մի այլի մէջ, որ գտնվում էր մօտակայ հովտում: Նա պարագայ էր սուրբ պատկերների պատրաստութեամբ, որ ծախվում էին վանքում: Հանգուցեալ ամենամեկ ընկերները չեն յիշում, որ նա իր երկար կեանքի ընթացքում երբ և իցէ նամակ ստանար, կամ մէկին ընդունէր:

Գիտնական պ. Կոլին արած նոր հետազոտութեան հիման վրա, ապացուցվում է որ բարակացաւ ասված հիւանդութիւնը առաջ է գալիս թոքերի մէջ փոքր միկրոսկոպական կենդանիների

մտնելուց: Այդ կենդանիները անցնում են մարդու մարմնի մէջ մեծ մասամբ մեղմ կերակուրների միջնորդութեամբ: Երբ մարմնի անասունի թոքը վարակված է լինում, միւսը նոյնպէս վարակում է և նրան գործածողին: Բժիշկ Բեկլամ «Gesundheit» գերմանական ամսագրի № 9 մէջ զգուշացնում է հասարակութեանը հում կամ կիրսակի միւս ուտելուց, որովհետեւ այդ միւսը կարող է տուբերկուլով վարակված կենդանուց լինել և Բեկլամի կարծիքով շատ օգտաւետ կը լինէր եթէ ժողովրդական բրօշիւների տարածման միջոցով հասարակութեան հասկացվէր այդ տեսակ մեղմ գործածելու վտանգի մասին:

Ամերիկական լրագիրները մի սարսափելի դէպք են պատմում, որ տեղի է ունեցել Էլզովիլ քաղաքում: Մի 22 տարեկան երիտասարդ, Զօն Բուրդեր անունով, իր երկու ծանօթ տիկիների հետ զբօսնելիս է լինում փողոցում: Այդ ժամանակ մօտենում է նրան մի շատ գեղեցիկ, 19 տարեկան օրիորդ Բուֆօրք անունով, ուղղում է Բուրդերի վրա մի ատրճանակ, արձակում է ատրճանակը և տեղի ու տեղը սպանում է երիտասարդին: Օրիորդին կարանաւորել են. նրա տուած քայքայութիւնից երեւում է որ նրանք միմեանց սիրելիս են եղել, բայց Բուրդեր, չը նայելով որ խոտացել էր պսակվել օրիորդի հետ, չէր կատարել իր խոստումը և անհաւատարմ է եղել նրան: Օրիորդը այժմ դատարանի պէտք է ենթարկվի: Չը նայելով որ նրա յանցանքը շատ ծանր է, այնու ամենայնիւ ամբողջ քաղաքի համակրութիւնը նրա կողմն է:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱՎԱԼՈՒԹԵՆՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 19 օգոստոսի: Ֆինանսների մինիստրութիւնը շաքարի գործարանատերերի ներկայացուցիչների ժողով է կազմում շաքարի գների ցածրացնելու հարցը ընկելու համար: Երկաթուղիների ընդհանուր կանոնադրութիւնը առաջարկվում է պետական խորհրդի քննութեանը: Մինչև նոր տարին կը ներկայացվի մինիստրների եզրակացութիւնը և յետոյ կը հաստատվի կանոնադրութիւնը: Երկաթուղիների այժմեան կանոնադրութեան այն յօդուածները, որոնք նորին համեմատ չեն լինի, կուղեւորվեն:

ՕԴԵՍՍԱ, 19 օգոստոսի: Կորած «Մօսկվա» նաւը ճանապարհորդները հասան Կ. Պոլսի: Յայտնվում է, որ նաւը ջարդվեցաւ յունիսի 7-ին երեկոյան 8 ժամին Բաս-Գաֆուսի 20 մղոն դէպի հարաւ հեռաւորութեամբ: Ճանապարհորդները ազատված են տիից հասցրած կարելուովի և նաւակների օգնութեամբ: Նրանք 50 օր անապատի մէջ անցկացրին, պաշարների կարօտութիւն կրելով և վայրենիների յարձակմունքներին ենթարկվելով: Անգլիական «Բադալ» նաւը փնտրեց ճանապարհորդներին: Մօսկվա շողեւաւր ալիքներից երկու կտոր է արված:

ԲԱԳՈՒ, 19 օգոստոսի: Նոր ճանապարհով այստեղից մինչև Թիֆլիս սկսվեցան երկաթուղու գնացքների շարժումները:

ՎԻԵՆԱ, 19 օգոստոսի: Զերնօգորիական իշխան Նիկոլայ այստեղ պաշտօնական ճաշ տուեց:

ՓԱՐԻՋ, 19 օգոստոսի: Լեսսեպսի կազմած ժողովի մէջ զբաղվում են 36 լրագիրների խմբագրութիւնները:

ԱԹԵՆՔ, 19 օգոստոսի: Յունական կառավարութիւնը պատուիրեց իր դեսպանին Կ. Պոլսի մէջ խստութեամբ պահանջել Բ. Գոնից յոյն-թիւրքական սահմանական անկարգութիւնների հարցի վերջացնելը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 19 օգոստոսի: «Пра-вит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, օգոստոսի 18-ին Թագաւոր Կայսրը և Կայսրուհին իրանց երեխաներով այցելեցին Ուստ-Իժօրի սպանդանների բանակը, նայեցին

ամրութիւնների վրա յարձակվելը և նրանց պաշտպանելը, Թեղանօթներից նպատակին խփելը, միսանների ճայթիւնը և կամուրջների գցելը: Երեկոյան 6 ժամին նրանք աջողութեամբ վերադարձան Պետերգօֆ: Պետական կայքերի մինիստրը ուղևորվեցաւ ներքին նահանգները: Նրա պաշտօնը յանձնված է մինիստրի օգնական Կուլօնիին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 19 օգոստոսի: Օգոստոսի 16-ին երեկոյան 6 ժամին բանտի այգիի մէջ պետական յանցանքի մէջ մեղադրված կարանաւորվածի զբօսանքի ժամանակ ցանկապատին մօտեցաւ մի կառք, որի մէջ երկու մարդ էին նստած: Կալանաւորվածը աւաղ ածեց իրան ուղեկցող վերակացուի աչքերի մէջ: Կառքի մէջ նստողներից մէկը ընթրիքով մահացու վերջ հասցրեց վերակացուին: Կալանաւորվածը անցաւ պատից, նստեց կառքի մէջ և երեքը միասին շտապով հեռացան: Հաւաքված ժողովուրդը վաղեց փախչողների ետեւից, կառքը շուտ եկաւ և յանցաւորները բռնվեցան: Ամբոխը կատաղութեամբ սկսեց նրանց ծեծել և թէպէտ պօլիցիան, հասած զօրքերի օգնութեամբ, կարողացաւ ամբոխից խլել յանցաւորներին, բայց նրանցից մէկը շատ ծեծվեւց մեռաւ հիւանդանոցի ճանապարհին: Վերակացուի վրա ընթրիքը արձակողը և կալանաւորվածը բանտն են հասցրած: Առաջինը յայտնեց, որ ինքը Սարատովի նահանգի Բալաշիկի գաւառի կառաւածատերի որդի Պետր Սերգեյեւի Պոլիվա-նօն է: Մեռած յանցաւորի անձնաւորութիւնը յայտնի չէ: Գնուութիւնը կատարվում է: Կարգադրութիւն է արված գործը զինուորական դատարանին յանձնել: «НОВО-СТН» լրագիրը հաղորդում է, որ Լեհաստանի մէջ գահական դատաւորներին ընտրեալ դատաւորներով փոխարինելը թոյլ կը տրվի մօտ ապագայում:

ԼՕՆԻՍ, 19 օգոստոսի: Ոչ պաշտօնական տեղեկութիւնների համեմատ օգոստոսի 18-ին Կասսիինի մօտ եղած կռիւն անգլիացիների համար այնքան աջող չէր, ինչպէս յայտնված է: Գնեւալ Գրամսի առաջաւորները ջարդվեցան, նրանց ազատեցին հեծելազօրքը և արտիլերիան: Անգլիացիները դեցեմբր թշնամուց խլված թընդանօթները: Օգոստոսի 18-ից գնեւալ Գրեյի Լօւս յայտնում է, որ երկուշաբթի օրվայ կուի ժամանակ եղիպտացիները ջըրված են: Գաշաը դիակներով է ծածկված: Անգլիական հեծալազօրքը իսկ. հակառակորդի թեղանօթները, բայց վերջը եզրկատացիները յետ դարձան և տարան իրանց թեղանօթները: Եղիպտացիները ամբու-թիւններ են կազմում Գրամսի դէմ Կասսասիինի մօտ:

ՄՕՍԿՎԱ, 20 օգոստոսի: Վաղը բացվելու է ձիաների հանդէսը: Ներկայացրած են 80 ձիաներ:

ՆԻՔԻՆ-ՆՕՎԳՕՐՕԿ, 20 օգոստոսի: Միջոցներ են գործ զբղում այն արգելքների դէմ, որ գետերի մէջ ջրերի նուազելը պատճառում է նաւազնացութեանը: Տնայաւառուի առուտուրը և վաճառականների հաշիւները բաւականացուցիչ են: Վճարումները բանկերին ճշգրութեամբ են կատարվում:

ՍԱՄԱՐԱ, 20 օգոստոսի: Սկստեմբերի 8-ին սպասում են գնեւալ Զերնիսեւի գալու: Նա հրաւիրեց Բագուից վարպետներին, որոնց հետ պայման է կապած Սիր-Գարիայի անջուր անապատների մէջ հորեր փորելու համար:

ՓԱՐԻՋ, 20 օգոստոսի: Լուր կայ որ Ֆըրանսիայի և Իտալիայի մէջ բանակցութիւն-

ներ են սկսվել, որպես զի խաղիս գրաւի
Տրիպոլի:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒԴ, 20 օգոստոսի: Բարձրա-
գոյն Հրամայված է 6-ին օգոստոսի փակել
Ս. Պետերբուրգի Նիկոլայեւսկի զինուորա-
կան հիւանդանոցի հետ միացած կանանց
բժշկական կուրսերը: Ուսանողներին նոր
ընտրութիւն լինելու է: Ուսում առնողնե-
րին թոյլ է տուած աւարտել բժշկական
ուսումը և աւարտելուց յետոյ կրել առան-
ձին նշան մի և նոյն ժամանակ իրա-
ւունք ստանալով պարագլու մանկաբարձու-
թեամբ և կանանց ու երեխաների հիւան-
դութիւնների պրակտիկայով: Յայտնված է
առաջին նախագիւղութիւն „Виржевыя
Бѣдомости“ լրագրին, այդ լրագրի անուն-
ընդի և անվայել դատողութիւնների համար
մամուլի և նրա յարաբերութիւնների մա-
սին զէպի կառավարութիւնը:

ՄՍՍՎԱ, 20 օգոստոսի: Երէկ կայացաւ
հանգիսի էկզպերտների մասնագիտացի
վեր-
ջին նիստը:

ԽԱՐԿՈՎ, 20 օգոստոսի: Ուսպենսկայա
տօնավաճառը դանդաղ է գնում:

ՓԱՐԻՅ, 20 օգոստոսի: Նրէկ ազգասիրա-
կան լիգան կայացրեց մի ճաշկերոյթ զեր-
մանական մարմնամարդների ընկերութեան
դահլիճում: Առաջարկվեցաւ մի աստ օրով
ցանկութիւն յայտնվեցաւ որ շուտով մօտե-
նայ գերմանացիներին վրէժխնդիր լինելու
բօլէն: Լիգայի նախագահ Կր-Ռուլէտ յոյս
յայտնեց Ստրասբուրգից ֆրանսիական պատ-
գամաւոր ընտրված լինելու:

ՄԻՋԱՅՈՒՅԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒԴ, 19 օգոստոսի: Օգոստոսի
16-ին պետական յանցանքի մէջ մեղադր-
ված կալանաւորվածի գրօնելու ժամա-
նակ բանտի այգիի մէջ երկու անյայտ մար-
դիկ կառքով մօտեցան բանտի ցանկապա-
տին, ընկճովերով սպանեցին կալանաւորվա-
ծին ուղեկցող վերակացուին, վերջին կալա-
նաւորվածին և փախան: Բայց շուտով կար-
քը շուռ եկաւ, ժողովուրդը բռնեց ընկաճ-
ներին և սկսեց նրանց ծեծել: Կալանաւոր-
վածը և վերակացուին սպանողը, որ Բա-
լաշիովի գաւառի կալուածատիրոջ որդի
Պալիվանով է, բերված են բերդը: Երբորդ
մեռաւ ծեծից, որ դադարեցաւ միայն
զօրքերի հասնելուց յետոյ: Մեռածի անձնա-
ւորութիւնը յայտնի է: Գործը յանձնված
է զինուորական դատարանին: „Journal de
St-Petersbourg“ հաղորդում է, որ Եպաօ-
նիայի գործը Կորէյայի հետ վերջացած է:
Եպաօնիան բաւականութիւն ստացաւ:
„Правит. Вѣстник“ լրագիրը հաղոր-
դում է. Պետական կայքերի միւնիստրը ծա-
ռայութեան գործերով ուղեւորվեցաւ Ս. Պե-
տերբուրգից: Միւնիստրութիւնը ժամանակա-
ւորապէս կը կառավարէ Կուլոմզին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒԴ, 20 օգոստոսի: „НОВО-
СТИ“ լրագիրը հաղորդում է, որ մամուլի
մասին օրէնքների վերաբնութիւնը սեպ-
տեմբերից վաղ չի սկսվի:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒԴ, 20 օգոստոսի: Պետական
բանկի 5% տոմսակը առաջին շրջանի ար-
ժէ 94 ռ. 75 կ., երկրորդ 90 ռ. 75 կ.,
երրորդ 90 ռ. 62 1/2 կ., չորրորդ 90 ռ. 12
կ., հինգերորդ 89 ռ. 87 1/2 կ.: Ներքին
5% առաջին փոխառութեան տոմսակը ար-
ժէ 215 ռ., երկրորդ 212 ռ. 50 կ., արեւե-
լեան առաջին փոխառութեան տոմսակը ար-
ժէ 89 ռ. 82 կ., երկրորդ 89 ռ. 25 կ., եր-
րորդ 89 ռ. 17 կ., ուրիշ 8 ռ. 23 կ.: Ռուս-
սաց 1 ռուբլ Լուգոնի վրա արժէ 24,06
պէնս, ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա արժէ
205 մարկ, 25 պֆ., ֆարիգի վրա արժէ
252 ֆրանկ 75 սանտիմ: Բորսայի տրամա-
դրութիւնը հանդարտ է:

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼԷՕՆԵԴ ԳԵՕՐԳՐՈՎԻՉ
ԿՆԻՆԱ Հասաւ Ս. ՊԵՏԵՐ-
ԲՈՒՐԳԻՑ Թիֆլիսի երաժշտական ու-
սումնարանի հրաւերով և յայտնում է, որ
բացի իր պարագլուներէն ուսումնարա-
նի մէջ նա մասնաւոր ԳԱՍԵՐ կը տալ
պիանոի վրա ածելու համար թէ իր ՏԱ-
ՆԸ և թէ տանից ԳՈՒՐՍ: Ընդունում
է սկսող երեխաներին, նոյնպէս և ԲԱՐ-
ՁԸՐ ԿՐԹՈՒԹԵԱՆ համար: Պայման-
ներին մասին կարելի է նրա հետ խօսել ա-
մեն օր 1—3 ժամը Թիֆլիսի երաժշտական
ուսումնարանի մէջ: ԳՐԻԳՐՈՎԻՉ
ԿԱՅԱ փողոց (Նախկին Կամենդատսկայա)
տուն ՏԵՐ-ՂՈՒԿԱՍՕՎ Ի ՁՅ 6:
(Կ. հ. շ.) 3—12

ՄԻ ՀԱՄԱԼԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂ, որ այժմ
արդէն Մանգլիսումն է ապրում, յանձն է
առնում պարագլու երեխաների հետ՝ թէ
աղբուկական և թէ հայոց ուսումնարան-
ների աշակերտներին և աշակերտուհիներին
հետ:

Պայմանները կարելի է առաջարկել հե-
տեւել հասցեով. Манглись, Габриэль
Мирзоевъ, въ рошѣ, дача Марѣи
Тимофѣевой.

ԻՐԱԽԱՐԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵ-
ՆԵԱԿ, Գօրովիսկի պրօպագանդի վրա,
տուն ճարտարապետ Բէլոյի: Գրասենեակը
բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 3
ժամը կէս օրից յետոյ և երեկոյեան 7—
10 ժամը ամենայն օր, բացի կիրակի օրե-
րից և մեծ տօներէն:

ԹԷՑ առաջին հունձի այս տարի չա-
փազանց գոյնաւոր և հոտաւետ: Այդ թէյից
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ
ստացված է 50,000 ֆունտ և ծախվում է
25% էժան և աւելի լաւ քան թէ ուրիշ
տեղ: Օրինակ. Լաւ ԿՈՆԳՐՈ Թէյ 1 ռ.—1 ռ.
20 կօպ., պատուական ՍԱՆՅԱ Թէյ 1 ռ.
40 կ., հիւանալի ՄՕՆԻԿ Թէյ 1 ռ. 60 կ.
այս Թէյ ամեն տեղ ծախվում է 2 ռ.—2 ռ.
50 կ., գեղեցիկ ԿԱՅՍԱՆ Թէյ 1 ռ. 80 կ.
և ամենալաւ ֆուլ-չու-ֆու Թէյ 2 ռ. մա-
րոր Թէյ առանց թղթի: Նոյն տեղը սովո-
րաբար լինում են 500 երկաթէ ՄԱՀԱՅԱՆ-
ՆԵՐ 6 ռ.—60 ռ., երկաթէ ԳՐԻՉՆԵՐ առ-
բողջ Անդրովկայի համար, չօկօլաւ ֆրայ,
Շեփիլդի ԳԱՆԱԿՆԵՐ, վերականգնող ՄԱԿ-
ՄԱՍՏԵՐ մազերի համար, հրացանների ԳԱՌԻ,
ԲԵՎԼՎԵՆԵՐ վերել, ԹԱՄԲԵՐ Բարնեբի,
Կօլմանի նըշըտայ, ԱԼԲՈՒՆԵՐ Շփրցի կէս
գնով: ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ,
ԹԻՖԼԻՍԻ ՄԷՋ ԱՐԾՐՈՒՆՈՒ
ԳԱԼԼԵՐԻՑՈՒՄ № 156, 157, 158,
159 և 100:
28—100

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՍՈՒՑԶԱ-
ԿԱՆ ԺՈՂՈՎԻ նախապատրաստու-
թիւնները հոգացող Կարգադրիչ Յանձնա-
ժողովը խնդրում է այն պարսններին, որոնք
որ և է ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ցանկա-
նում են ստանալ ՅԱՆՁՆԱԺՈՂՈ-
ՎԻՑ կամ հաղորդել նորան, որ բարեհա-
ձեն ՇՆՈՐՀ ԲԵՐԵԼ նրա ԳՐԱ-
ՍԵՆԵԱԿԸ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱ-
ԼԵՐԷԻ ՄԷՋ № 170: Գրասենեակը
բաց է ԱՄԵՆ ՕՐ առաւօտեան 9 ժա-
մից մինչև 11 ժամը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՍՈՒՑԶԱ-
ԿԱՆ ԺՈՂՈՎԻ նախապատրաստու-
թիւնները հոգացող Կարգադրիչ Յանձնա-
ժողովը խնդրում է այն պարսններին, որ
և է ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ցանկա-
նում են ստանալ ՅԱՆՁՆԱԺՈՂՈ-
ՎԻՑ կամ հաղորդել նորան, որ բարեհա-
ձեն ՇՆՈՐՀ ԲԵՐԵԼ նրա ԳՐԱ-
ՍԵՆԵԱԿԸ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱ-
ԼԵՐԷԻ ՄԷՋ № 170: Գրասենեակը
բաց է ԱՄԵՆ ՕՐ առաւօտեան 9 ժա-
մից մինչև 11 ժամը:

Լոյս տեսան „ՎԱՐԺԱՐԱՆԻ“ ա-
ռաջին և երկրորդ համարները: Ստորա-
գրուել կարելի է Վ. Շահվերդեանի լրա-
գրական գործակալութեան խանութում և
պ. Ծառուբեանի Գէպոյում: Տարեկան զինն
է ՀԻՆԳ ԲՈՒՐԻ:

ԲԱԳՐԱՏ ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ
Ո Ւ Ս Ո Ւ Մ Ն Ա Ր Ա Ն
ՊՐՈԳՐԱՄԱԶԻԱԿԱՆ ԿՈՒՐՍՈՎ
(Վէլիամինեան փողոց, իշխան Ամատունու տանը)
Բացվում են I և II պրօգրիմնադիական դասատներ պանսիօնով: Ընդունելութիւնը
և ըննութիւնները կը սկսվեն օգոստոսի 20-ից, իսկ ուսմունքը սեպտեմբերի մէկից: Գա-
սատուութեան համար հրաւիրված են բացառապէս ԳԻՄՆԱԶԻՆԻ ՈՒ-
ՍՈՒՑԻՆԵՐ:

4—8

Պատիւ ունիմ յայտնել ԹԻՖԼԻՍԻ ԵՒ ՆՈՐԱ ՉՈՐՍ ՎԻՃԱԿՆԵՐԻ ԲՈՂՈՐ
ԵՐԵՑՈՒՆԵՐԻՆ ԵՒ ՔԱՀԱՆԱՆԵՐԻՆ, որ համաձայն դաշնագրի ներկայ
թուի ԵՐԵՑՈՒՆԵՐԻ 15-18 ՎԵՐՋԱՑԱՆԻ մամուլաձուլութեան ՆԱԽԿԻՆ կապալա-
ռուի պայմանագրով և այսուհետեւ ՊԵՏԻ ԵՒ ԳԻՄՆԱԶԻՆԻ ԵՒ ՆԱԽԿԻՆԻ
մամ գնելու համար, որպէս նոր կապալառուի: Առեւտրի խանութը իւր
նախկին տեղն է: Կապալառու թուլութեանց:
2—3

ՕԴՈՍՏՈՍ ԱՄՍԻ ՄԷԿԻՑ
ՍԿՍԵՑ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ՎԻԷՆՆԱՅՈՒՄ
L'ORIENTAL
ՖՐԱՆՍԵՐԷՆ ԹԵՐԹԵՐ, ԱՄՍԻՐ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ:
„Ժուրնալ Դ'Օրիան“ լրագրի հին բաժանորդներին դադարեցրած թերթի տեղ
կուղարկվի այդ նոր հրատարակութիւնը:
„L'Oriental“ թերթի տարեկան գինը 8 ռուբլ է, կէս տարվանը 4 ռուբլ:
Գրվել կարելի է „ՄՇԱԿԻ“ խմբագրութեան մէջ, կամ ուղղակի Վիենայում գիմե-
լով հետեւի հասարակ հասցեով. Vienne (Autriche) M. F. Salles I. Neuer Markt 9.

Մ Ի Ջ Ի փ ո ղ ո յ, Կ ա թ օ լ ի չ ե ս կ ա յ ա փ ո ղ ո յ ի ան կ ի լ ն № 13.
Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻԷՆՆԱՅԻ ՄԵՐԵԼ ամե-
նայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ ԿՐԱՎԱՆԵՐ 8—30 ռ., չա-
մադաններ 250—25 ռ., սակվոյթաժներ 1. 30—12 ռ., սոււն դուռ կն եր ձա-
նապարհի 6—35 ռ., մարաններ (погребцы) 6—25 ռ., սա մօ վա ռ ն ե ռ
60 կ.—1.25 ֆունտը, կուլանի պղնձ ամաններ, Գերմանիայի երկաթէ էմալով
ամաններ, ու մ ի վ ա լ ի ն ե ռ մ ր ա մօ ռ ն ի 38 ռ.—75 ռ., հրացաններ
երկու լույսի 6—32 ռ., ու վ ո լ վ է ռ ն ե ռ ա մենայն տեսակ 3. 50—30
ռ., պատրոններ (գուլաններ) ընկճովերի, սիգար Բէնդարդի ֆարրիկից, պապի-
րոս և թամբաքու Վուլնարովի գիլդի պապիրօգի. 5,000 ֆունտ թէյ (այդ) եղ.
ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկվիտ. (սուխար չայու և կաֆէի) Էլիէմի. կօֆէ Էլիէմի և
Միխէլսօնի. Պետերբուրգում 40—1 ռ. 25 կ. հայկիներ ամենայն տեսակ
28 կ.—240 ռ., պրոբկայ գինեվաճառների, հանքային և զարնջի (Дая
зельтерскихъ водъ и пива) ղուլթուկ (пучкъ), պարտաներ սամովարի և
չայու, դանակ չանգալ զանազան ֆարրիկաների 1 ռ. 20 կ.—25 ռ. դուլինը.
գրչակութիւն 1 ռ. 80 կ.—5—60 կ. դանակ ջիւրի 1—60 կ.—12 ռ., դա-
նակ հացի 20 կ.—1 ռ., հատը, կուխներ 1—40 մինչև 3—20 կ. պրիբօր.
միս կարելու մաշինայ. Անգլիական ութներ, Բրիտանիայի չայնիներ, կաֆէի
նիկներ ամենայն տեսակ, ջաղացներ կաֆէի համար, ֆրիտեր—Չուր մաքրելու,
կրամալ կարօրէկն 18 կ., վաքս Ֆրանսիայի ծախ, Թուղթ փողտի, կանկրա-
ներ, սուրգուշ, մատիտ, գրիչ երկաթէ, գրչակութ, քարտասխտակ, թանաք,
թանաքամաններ, պրեսպալիներ, գրչակ սեղանի և չայու ֆրաժէ, վաքսվի
և բրիտանիկ դուլինը 1—50 կ. մինչև 12 ռ., և չայու 45 կ.—5 ռ., չու-
միչէկէ 45 կ.—5 ռ., շամադաններ ամեն տեսակ 25 կ.—12 ռ. Չուխտ, պոլ-
սապրիկաներ վարչավու, Ռեզուի ԿԱԼՕՆԵՐ, ամեն տեսակ, գուլաններ կա-
նանց և մարդկերանց 15 կ.—50 կ. Չուխտ, շապիկներ, մարդկերանց գալուս-
տիկներ, գոնտիկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրեկի և շաքի. սանդղի շիւ-
մայու ոսկրէ, գուտապրէշովի և փայտէ, չուտաներ գլխի, շորի, սապիկի, պրի և
կարտի համար. չուլքի թէյ (бумага) մատիկի կօֆի և շալէ (гарусъ) ֆէլ-
չատիէք մարդկերանց և կանանց, պորտմաններ, քիսաներ, պապիրոսի ամաններ
և մանր գոլանտերիկի պարանքներ, սապոն ամեն տեսակ 3 կ.—30 կ.,
կտոր, հոտալէտ ջրեր, պուլքա, Գլիցերին ջրի քաջալ, հոտալէտ պարաշոկներ
ԿԻՆԵՐԻ ԼԱՐՈՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն:
Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերոյիշեալ ապ-
րանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻՔԱՅԷԼ ՏԵՐ ՆԵԿՈՂՈ-
ՍԵՆՆՅԻ պահեստում. (ВЪ СКЛАДѢ) միջի փողոցում կաթոլիկաց փողոցի ան-
կիւնում № 13.
Օտարաբաղադրացի կարող են գիմել հետեւել հասցեով. Тифлисъ Ми-
хаилу Н. Теръ-Никогосову.
119—180
Մ Ի Ջ Ի փ ո ղ ո յ, Կ ա թ օ լ ի չ ե ս կ ա յ ա փ ո ղ ո յ ի ան կ ի լ ն № 13.